# ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՍՊՈՐՏԼԱՆԴԻԱ

***Ապրիլի 17-ին Արցախի պետական համալսարանում կազմակերպվել է համալսարանական «Սպորտլանդիա» մարզական մրցաշար:***

Մրցույթն ընթացել է 5 փուլով, որոնց ընթացքում եղել են տրամաբանական, մարզական և ժամանցային խաղեր: Մրցույթին մասնակցել են համալսարանի 5 ֆակուլտետներից հավաքական թիմեր՝ յուրաքանչյուր թիմում ընդգրկվել է 10 ուսանող:

«Նմանօրինակ մրցաշարեր համալսարանական առօրյայում հաճախակի բնույթ են կրել: Ստեղծված անորոշ իրավիճակում ուսանողության ժամանցը հաճելի և ակտիվ կազմակերպելու համար անհրաժեշտ համարեցինք մեկնարկ տալ նոր ձևաչափով մարզական-տրամաբանական խաղերի՝ առանցքային նպատակ ունենալով թիմային աշխատանքի կարևորումն ու ընկերական կապի ամրապնդումը»,- նշել է միջոցառման կազմակերպիչ ՈՒՀՏԱԿ բաժնի պետ Վ. Գալոյանը:

Մրցաշարի արդյունքում մրցանակային առաջին տեղն է զբաղեցրել բանասիրական ֆակուլտետի «Արցախ» թիմը, 2-րդ տեղը՝ մանկավարժության և սպորտի ֆակուլտետի «Բռունցք» թիմը, 3-րդ տեղը՝ տնտեսագիտության ֆակուլտետի «Ուղեղի գրոհ» թիմը: Հաղթող թիմերն արժանացել են պատվոգրերի, իսկ մրցանակային 1-ին տեղը զբաղեցրած թիմը հնարավորություն է ստացել նաև մասնակցելու առաջիկայում կայանալիք պատմամշակութային արշավին: Միջոցառումը կազմակերպվել է ՈՒՀՏԱԿ բաժնի և ՈՒԽ համատեղ ջանքերով:

# ԳՐԱԿԱՆ ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՑԵՐԵԿՈՒՅԹ



***Ապրիլի 5-ին Արցախի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետի ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի դասախոս, մ.գ.թ., դոցենտ Գայանե Հովսեփյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված ռուս գրականության ականավոր դեմքերից մեկին՝ Մարինա Ցվետաևային և, առհասարակ, ռուսական խոսքին:***

Միջոցառման առաջին մասում ուսանողները ներկայացրել են տեղեկություններ Մ. Ցվետաևայի կենսագրությունից ու գրական գործունեությունից, հանդես եկել ասմունքով ու երաժշտական կատարումներով գրողի ստեղծագործություններից:

Միջոցառման երկրորդ մասը ինտելեկտուալ խաղ էր ուսանողների միջև, թիմերը մրցում էին միմյանց հետ ռուսաց լեզվից ունեցած իրենց գիտելիքներով:

Միջոցառման նախաձեռնող Գայանե Հովսեփյանը, կարևորելով միջոցառման նշանակությունը հատկապես շրջափակման պայմաններում, նշել է, որ այն նպատակ ուներ զարգացնել ուսանողների մասնագիտական հմտությունները, ստեղծագործական կարողությունները, նպաստել թիմային աշխատանքի և մտածողության զարգացմանը:

Ռուսաց լեզվի և գրականության ամբիոնի վարիչ, մ.գ.թ., դոցենտ Ինգա Հակոբյանը շնորհակալություն է հայտնել միջոցառման նախաձեռնողներին և մասնակիցներին՝ կարևորելով նման միջոցառումների դերը ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու տեսանկյունից և պատվոգրերով պարգևատրել ինտելեկտուալ խաղում հաղթած թիմերին:

«Քո ժամանակը»

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ

Խմբագիր՝ Զ.ՍԱՌԱՋՅԱՆ
Համարի պատասխանատու՝ Անժելա Շահանց,
լրագրություն 3-րդ կուրս

Տպաքանակ՝ 400
Տպագրվում է Արցախի պետական համալսարանի հրատարակչության տպարանում
Մեր հասցեն՝ Մ.Գոշի 5:
Հեռ. (047) 94 04 91

Ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդությանը:
ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

# Քո ժամանակը

№ 3
ԱՊՐԻԼ
2023

ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ԱՄՍԱԹԵՐԹ


# ԱՐՊՀ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԸ ՄԱՍՆԱԿՑԵԼ ԵՆ ԾԱՌԱՏՈՒՆԿԻ

***Հովհաննես Բաղրամյանի անվան ռազմահայրենասիրական երիտասարդական շարժման նախաձեռնությամբ Մեծ Հայրենականի հայ հերոսներին նվիրված ծառատունկ է կազմակերպվել:***

Միջոցառմանը 106 ծառ է տնկվել՝ խորհրդանշելով Հայրենական մեծ պատերազմի հայ հերոսների թիվը:

Նախաձեռնությանը միացել են Արցախի «Ռուսական համայնք» հասարակական կազմակերպությունը, Արցախի բուհերի ուսանողները: Արցախի պետական համալսարանի տասնյակ ուսանողներ մասնակցել են ծառատունկին:

***Ապրիլի 5-ին Ստեփանակերտի Զինվորական պանթեոն-հուշահամալիրի տարածքում Մարշալ***

# ՄԻՋՈՑԱՌՈՒՄ ԴՊՐՈՑՈՒՄ

***ԱրՊՀ «Կերպարվեստ» կրթական ծրագրի ավարտական խմբի ուսանողների փորձուսուցումը Ստեփանակերտի թիվ 6 դպրոցում ամփոփվեց միջոցառմամբ:***

Աշակերտներն ու ուսանողները կազմակերպեցին ամփոփիչ միջոցառում, որի ժամանակ կատարվեց աշակերտների պատրաստած դիզայներական աշխատանքների և նկարների ցուցադրություն:

Դրանք անմիջականորեն ստեղծվել էին մեր ուսանողների ուղղորդմամբ և ղեկավարմամբ:

Փորձուսուցումն արդյունավետ էր. արվեստն այն հարթակն է որն իր մեջ միավորում է շնորհը, ձիրքը, արարելու կամքը:

## «Արցախ. ապրելու բանաձև» էսսեների մրցույթում հաղթող է ճանաչվել ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետի «Իրավագիտություն» կրթական ծրագրի ուսանող Կարեն Գարիկի Մարտիրոսյանի աշխատանքը: Ձեզ ենք ներկայացնում մրցույթին ներկայացված նրա ստեղծագործությունը.

***Էս երկիրը, էս մի կտոր հողն իր որդիներին ավելի շատ տվե՞լ է, թե՞ առել, ավելի շատ կենսատու՞ է եղել, թե՞ հոգեառ... Կշեռքին թե մահն ու տառապանքը դնես, հաստատ նժարն իր կողմը կքաշի, բայց չի քաշում՝ գիտե՞ք ինչու: Որովհետև մյուս նժարը միշտ մեր անդավաճան սերն է պահել, մեր երազանքն ու կորովը, կենսասիրությունն ու չհանձնվող, չկոտրվող ոգին: Դարերով եկել ենք՝ մեր ճշմարիտ ու արդար իրավունքը թմբկահարելով, այլ բան, որ չեն լսել, խաբել են, երկրորդ, երրորդ, հերթական ճշմարտություններ հորինել, այնքան, որ իրենք իսկ հավատացել են այդ ինքնախաբեությանն ու ընկել մեր հետևից, գողացել մեր տան բանալին, իրենց տանուտեր զգացել:***

Ախր ինչքա՜ն հիմար կարելի է լինել՝ ժամանակ ունենաս ու տունդ չպարսպապատես, քարը քարին դնելու փոխարեն իրար մեջ, հայրենակիցներիդ շարքում մոլագար հայացքով թշնամի փնտրես ու նրա դեմ պայքարես՝ անտեսելով տանդ առջև փռված գորշ միգում թաքնված գազանին, որ հարմար պահի էր սպասում՝ հարձակվելու, հոշոտելու տանտերերին... Ախր ինչքա՜ն հիմար կարելի է լինել, որ 30 տարի ժամանակ ունենաս, բայց մտածես քո գրպանի հաստության մասին, քո ստամոքսի կուշտ լինելու մասին, քո տաքուկ տեղի մասին...

Վերցնե՞լն է հեշտ, թե՝ պահելը. հաստատ ոչ առաջինը, որովհետև մենք մեր հայրենիքը նախ մեր հոգում ու մտքում ենք ազատագրել, ապա զենք առել ու արյուն, արյուն, արյուն թափել, զոհել ոչ թե հարյուրներով, այլ հազարներով: Ու այդ արյունն այսօր էլ ենք թափում, որովհետև, ինչպես հարկն էր, չսիրեցինք մեր տունը, մեր ունեցածն աչքի լույսի պես չպահեցինք:

Ու այդպես հասել ենք այս անկումային կետին, որից անդին ոչնչացումն ու բնաջնջումն է, հայրենիքի վերջնական կորուստը, Արցախի վերջնական հայաթափումը: Կհատե՛նք այդ գիծը՝ կախված է առավելապես մեզնից, ինչքան էլ արտաքին գործոնն է գերակայող թվողը: Թվում է, որովհետև ժողովուրդները նախ և առաջ իրենց ինքնակազմակերպման ու բռունցքվելու շնորհիվ են դիմակայել ու դիմակայում, հաղթել ու հաղթում: Մենք պիտի ընտրություն կատարենք՝ անձնականի ու անանձնականի, մեր ես-ի ու հայրենիքի միջև: Էս երկիրը ուզում է, որ տեր կանգնենք իրեն, ամեն ինչի մեջ չփնտրենք մեր սեփական շահը, դրամով երբեք չչափենք անգնահատելին...

Ինչքան էլ խոցված ու արյունաքամ, մեր երկիրն ապրելու, ոչ թե մեռնելու երկիր է, երազելու և ոչ թե հուսախաբ, թևաթափ լինելու երկիր է: Ինչքան էլ հացը քիչ է, մենք՝ զրկված լույսից ու ջերմությունից, մեր սրտի սերը չի պակասել, ճառագում է հրի նման՝ լուսավորելով ապագայի նկատմամբ մեր մտածումը: ➥ 3



2 ➥ Մենք կարծես ավելի հասկացող ենք դարձել, իրար ձեռք մեկնող, դարձել ենք ընտանիք, որ գիտակցում է ընդհանուր վտանգն ու սպառնալիքը ու փորձում է ելք գտնել ստեղծված իրավիճակից: Այս գիտակցությունը, սակայն, բացարձակ չէ, որովհետև միշտ էլ գտնվում են անարժաններ ու եթե կուզեք՝ ստահակներ, որ հայրենիք ու սրբություն չունեն, իրենց աստվածը Մամոնան է, Դրամը, Հարմարավետությունը...

Ես իմ ազգի պայքարող տեսակն եմ ճանաչում միայն, այն տեսակը, որ պարտվել չգիտի, հոսանքի հետ գնալ չգիտի, սպառվել չգիտի: Դարերի խորքից եկել ու հասել ենք այս օրվան, որ թույլ տանք մեզ սրի՝ քաշեն... Այլընտրանքորեն մի ճանապարհ կա, որով պարտավոր ենք և կգնանք: Անզիջում պայքարի ճանապարհն է դա, որ բույն է դնում նախ մեր սրտում, սկիզբ առնում վերջինից ու, ոտնատակ անելով փորձությունները, հասնում նպատակակետին... Միակ բանաձևը դա է՝ պայքար ու ինչքան հնարավոր է բարձր ինդեքս: Ապաշնորհ գործ է՝ մեղադրանքի սլաքներ ուղղել այս ու այն կողմ, ձեռքերը ծալած նստել ու ասել, որ ոչինչ մեզնից կախված չէ: Ինչքան էլ չորս կողմից ճնշեն, մենք պիտի մնանք էս մի բուռ հողում, մեր ամենօրյա աշխատանքով պիտի փոքրիկ լումա ներդնենք մեր ապուպապերի սկսած գործում: Ու երբ բոլորս օղակ կազմենք այս Ազգային Գաղափարի շուրջ, հավատացեք, որ փշերով լի այս մի ճամփան էլ կանցնենք ու կստիպենք բոլորին հաշվի նստել մեր անայլընտրանք անկախության ու իրավունքների հետ:

Երբ ճանապարհն ապաշրջափակվի, չհեռանաք, այս հողում խրված թողնելով ձեր կոշիկն ու հետքը՝ ոտաբոբիկ չընկնեք ուրիշ աշխարհներ: Աշխարհի կենտրոնը էս երկիրն է, էս հողն ու ջուրն է, ուրիշի տանը հյուր կմնաք ընդմիշտ: Մնացեք, կառուցեք, ավելի լավը դարձրեք Արցախը, որ վաղը չամաչեք նայել զոհված հերոսների՝ շիրմաքարից նայող ու իրենց կիսատ մնացած երազները խնկարկող աչքերին: Միակ ուղեգիծը, որը պիտի ընտրենք, մնալու ու պայքարելու ուղեգիծն է: Ես մնում ու պայքարում եմ, որովհետև պարտք ունեմ ինձ սնած հողին վերադարձնելու, որովհետև էս երկիրը ապրելու, ոչ թե մեռնելու երկիր է, էս երկիրը դրախտավայր պիտի դառնա, ոչ թե՝ գերեզմանների հովիտ, էս երկիրը պիտի ազատվի շղթաներից, էս հողից միայն մեր աղոթքը պիտի բարձրանա...

## ԲԱՆԱՍԻՐԿԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏՈՒՄ ՕՐԸ ՇԻՐԱԶՅԱՆ ԷՐ

***ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետում ապրիլի 26-ին օրը շիրազյան էր. գրականության և ժուռնալիստիկայի ամբիոնի դոցենտ, բ.գ.թ. Սիլվա Խաչատրյանի նախաձեռնությամբ կազմակերպվել է գրական-գեղարվեստական ցերեկույթ՝ նվիրված հայ մեծ բանաստեղծ Հովհաննես Շիրազին:***

Ողջունելով ներկաներին՝ միջոցառման կազմակերպիչ Սիլվա Խաչատրյանը խոսեց Շիրազի գեղարվեստական ժառանգությունից, արժևորեց մեծ գրողի գրական վաստակը՝ ընդգծելով նրա ստեղծագործությունների արդիականությունը:

«Հովհաննես Շիրազը խորհրդահայ այն բանաստեղծներից է, ով խորհրդային բանտում, երբ արգելվում էր ազգային հարցի մասին բառ անգամ արտաբերել, պահեց մարդու և բանաստեղծի իր դիմագիծը և բանաստեղծություններով, պոեմներով արտահայտեց ճշմարտություններ, որոնք թաքուն իրար ականջի վախենում էին անգամ շշնջալ շատերն իր գրական ընկերներից: Հովհաննես Շիրազի ստեղծագործություններն այսօր էլ արդիական են: Նա մեր ազգային ողբասացն է, ըղձասացն է, պահանջատերը»,-նշել է Ս.Խաչատրյանը՝ պատմելով Շիրազի հետ կապված իր՝ աշակերտական և ուսանողական տարիների հուշերը, նամակագրության և Շիրազի հետ ունեցած հանդիպման մասին:

Ս.Խաչատրյանը հիշեց, թե ինչպես են 80-ական թթ. ադրբեջանական ճնշումների շրջանում ուսանողներով Արցախից գնացել Երևան և Շիրազի հետ հանդիպել: Միջոցառման ընթացքում ուսանողները հանդես եկան Շիրազի ստեղծագործություններից ասմունքով: